

Չափազանց համեստ պահանջ է, չէ՞ Բայց էլ ինչ անհնձ. Երբ ապականութիւնն է մեզ վրա տիրողը, այդ դէպքում մեր գլխին խոռով կը մնայ ոչ միայն արտասահմանը, այլ եւ նոյն իսկ երկիրը...

Մ Ա Տ Ե Ն Ա Ք Բ Ո Ւ Թ Ի Ն

I

Թատերադր. Բ. Պատուեմանի. I. «Տայր Միբիկ անդէնը», 32 էր. գ. 1 ֆրանկ. Ալեքսանդրիա 1901.

Պայտեցի ամենահին դերասաններից մէկը, պ. Պատուեման, որ տարիների ընթացքում դերասանական խմբի ղեկավար է, շատ աջող միտք է յղացել՝ Պայտի ժողովրդական բարբառով փոխադրել պ. Սունդուկեանի բոլոր պիէսները:

Մեր առաջ գրված գրքերը—«Տայր Միբիկ անդէնը»—«Օսկան Պետրովիչը էն կինքումը» վողովի փոխադրութիւնն է. Այդ մի նախա- փորձ է որից յետոյ պ. Պատուեման մտա- դիր է պօլսահայերէնի վերածել «Պէպօն», «Սաթարալան» եւ այլն:

Փոխադրութեան աջողութեան կամ անաջողութեան մասին մենք կարող ենք խօսել մի- այն վերապահութեամբ, որովհետեւ հմուտ չենք Պայտի ռամկարարութիւնը: Սակայն, որ- քան մենք կարող ենք դատարար լինել այդ հարցում, փոխադրութիւնը վատ չէ:

Մենք երկու նկատողութիւն միայն կարող ենք անել պարսի փոխադրողին:

Նախ այն, որ մի գրուածք ժողովրդական դարձնելու համար ամենեւին կարեւորութիւն չը կայ խնդրել ոճը օտարազգի, ներկայ դէպ- քում, թիւրքերէն բառերով, դարձուածքներով ու ամբողջ նախադասութիւններով: Տեղ-տեղ այդպիսի օտարաբանութիւնները բնորոշ են, բայց այնպիսի օտարութեամբ, ինչպէս պ. Պա- տուեմանն է գործ դրել, նրանք միայն վը- նասում են գրուածքի գրական արժէքին: Ինչ զուցէ առարկան, թէ պօլսահայ ամառիկը այդ- պէս է խօսում: Բայց չէ որ կայ իրական բը- նականութիւն եւ գեղարուեստական բնակա- նութիւն, չէ որ գեղարուեստը, ամբողջով, կենսորոշանքներով ու խոսքերով, գտնու է իրականութիւնից վերցրած նիւթը, լինի այդ մի պատկեր, մի եղանակ թէ մի ոճ: Հարեւոր անվայել հայտնաբերել է թափում եւ սակայն ոչ մի գրուածքում այդպիսի հայ- նոյնք գտե՞լ չէ՞ք գտնի եւ սակայն այդ գրու- ւածքներում դուրս բերված տիպը դրանով անբնական չէ դառնում: Ոչ մի դերասան նոյն- պէս թոյլ չի տալ իրան, հարեւոր մարդ ներ- կայանելիս, պահել իրան բոլորովին բնական կերպով եւ այլն:

Ինչպիսի խոհմ եւ հեռատես փեսացուի համո- ղիչ խօսքերի վրա:

—Արդեօք չէ՞ կարելի մի զինուոր պատուի- րել այս գիշեր՝ յայտնի վարձատրութեամբ, ի հարկէ:

—Սպասեցէ՛ք, խնդրեմ, մի վայրկեան, ա- սաց իշխանը. իմ գլխում մի լաւ միտք ծա- գեց... Չորս տարի առաջ, երբ ես Լօնդոնում էի, իմ բնակարանի վրա գիշեր ժամանակ անայտ գողեր յարձակում գործեցին եւ յա- փառակցին իմ բոլոր թանկագին իրերը, մա- նաւանդ քարեր, մատանիներ եւ այլն: Եւ որ- հիւ վերատեսուէլ Գողիմանի փորձառութեան, ինչ աջողից գտնել գողերին եւ նորից ձեռք բերել իմ գողերը: Այժմ ինչ թու՞մ է, որ այդ մարդը ամենայնպէս պահպանը կարող էր լինել այս գիշեր ձեր հրապուրիչ եւ առձեռն հարստութեան համար:

—Այո, ամենայնպէս, միաբերան համա- ձայնվեցին պարզամիտ տիկինները:

Մի ժամ չանցած՝ Պետրովիչի վերադարձաւ, եւ նրա հետ մի մարդ, որ իրան անուանեց վերատեսուէլ Գողիման: Սա մի փիթիարի մարդ էր, անձոնի գէմբով եւ խրոխտ, հրամայողա- կան ձեւերով: Նա ասաց, որ քանի որ առաջ գաղտնի կերպով իմացել է, թէ ինչպէս մի քանի յանդուգն գողեր վճռել եւ պատրաստ- վել են այս գիշեր յարձակում գործել միւս վիրդինէի տան վրա եւ յափշտակել նրա հար- սանիքի բոլոր ընծաները, եթէ մինչեւ անգամ դրա համար հարկաւոր լինէր արիւն եւս թա- փել:

—Եւ որովհետեւ ես անշուշտ կամենում եմ ինքն ձերբակալել գողերի առաջնորդին, հարա- տութեամբ աւելարկեց ինքնապի վերատեսուէլ Գողիման, ուստի եւ ես կարգադրեցի, որ իմ օգնականները թաղ կենան իմ նշանակած տեղը եւ դուրս գան յանկարծակի, երբ, հարկը պա- հանջելուց, նշան կը տամ ես: Ահա եւ մի

Երկրորդ նկատողութիւնը վերաբերում է իւ- կապէս բուն գրուածքին: «Օսկան Պետրովիչը էն կինքումը» պիէսի մէջ խիստ երկու- կայ Մի կողմից դա մի սրամիտ, թեթեւ, բայց լուրջ վողովի է գրական որոշ արժանաւորու- թիւններով, միւս կողմից՝ դա մի ցրիկի մընջ- կատակ, պանտոմիմ յիշեցնող բան է: Մեր կարծիքով, եթէ պ. Սունդուկեանը բաւակա- նանար ժողովրդի նախապաշարմունքներից վերցնելով դժուրը դնալու գաղափարը եւ կենտ- ռոնացնէր իր ուշադրութիւնը միմիայն մաղդ- կային փարիսեցիութիւնը երդիծաւանդու վրա առանց բնական դուրս բերելու Բենեդիկտի տա- րող զօրանոցը՝ սատանաճուաբեի «մանկական պարտէզով» եւ դժոխային պատմների պառա- ւական պատկերացումներով, այն ժամանակ «Օս- կան Պետրովիչը» կարող էր լինել մի կլասիկա- կան վողովի, որքան կարող է կլասիկական լինել մի վողովի: Բայց այնպէս, ինչպէս որ կայ, այդ վողովի, եթէ կարելի է այսպէս աս- անել, կաղ գրուածք է, մի-ռոյն վնասով:

Պ. Պատուեման, իբր ազատ փոխադրող, կարող էր այդ պակասութիւնը ուղղել, բայց չի արել այդ եւ, մեր կարծիքով, աստիկ սխալվել է:

II

Երկր. «Որէնքի կողմ», բնագրից ամբողջ Պ. Թա- տուեման, 50 էր. գ. 20 Կ. Թիֆլիս 1901.

Հանձարեղ գրուածքը փոփոխելու եւ կրճա- տելու համար պէտք է գրեթէ հանձար լինել: Այդ է պատճառը, որ համարեա չը կան կլա- սիկական գործերից վերածված աջող մանկա- կան գրքեր:

Սակայն երբ մարդիկ գրեթէ սրբապծու- թիւն են կատարում անգամաւորով եւ փոփո- խելով հանձարների անսահ երկերը մանուկների համար, մենք գոնէ հասկանում ենք նրանց նպատակը եւ յաճախ հաշտվում ենք այդ թեր- եւս անհրաժեշտ չարիքի հետ, բայց մեզ միայն- քամայն ապշեցնում է պ. Թատուեմանի արածը:

Երկրի հոգեկաւոր դրաման, որ, ի դէպ ա- տել, վաղուց բաւական աջող թարգմանել է պ. Գ. Բարխուդարեան, նա «ամբողջ» է եւ ստացվել է մի լիբրետտո, բայց թէ ինչու եւ ինչ համար—այդ միտում է անհասկանալի:

Լիբրետտո բառը կարող է խիստ թուել շա- տերին, բայց մենք չենք չափազանցեցնում, որով- հետեւ պ. Թատուեմանը վերցրել է ու առանց ծանօթութիւնների, առանց բացատրութիւն- ների իր անգլիարուեստական արձակ ոճով կրճատել է Երկրի հրաշքի տառաւորը, տեղ- տեղ միայն բերելով որոշ հատուածներ՝ մեծ մասամբ անաշուղ ռոմանտիկ թարգմանու- թիւններ, որոնց մէջ պատմութիւնն են այնպիսի կուրիոզներ, ինչպէս «հաւը չը խօսած դուրս

զոյգ ապարանջան, որ ես կանխաւ պատրաստել եմ աւազակագետին ընծայ տալու համար:

Եւ նա հանցեղ գրպանից երկու հատ ձեռքի փայտեղ շղթաներ, որ տիկինները սկսեցին զի- տել հետաքրքրութեամբ:

Լէզի Գանուէն եւ միւս «Վիրգինէն» կատա- րելապէս հաւատարմով թէ իշխան Պետրովիչն է եւ թէ վերատեսուէլ Գողիմանին՝ հեռացան ի- րանց ննջարանը եւ խոր ու հանգիստ քուն մտան:

Առաւօտեան լոյսը դու չը բացված՝ ժամը վեց եւ կէսին՝ Վիրգինէի աղափրքը սարսա- փահար մտաւ իր տիրուհու ննջարանը եւ ա- ղաղակեց ինչպէս խնայցնոր:

—Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել, զարմանքով հարցրեց Վիրգինէն եւ տեղից վեր ցատկեց:

—Չարագործ գողերը կողոպտել են մեր տան մէջ բոլոր եղած-չեղածը, մի լուգի մի ան- գամ չեն թողել, չնչսպաստ պատասխանեց ա- ղափրքը. իսկ դժնապահ Մարկը ընկած է գրա- դարանում, յատակի վրա: ձեռքերը շղթայված, ոտքերը կապած...

Ետագիցին դէպի մատնադարան:

Դռնապահ մարկը ձեռք ու ոտքերը կապած— շղթայած՝ չէր կարողանում ձայն հանել: Աղա- խինը նայեց դէպի բերանը եւ այնտեղից հանցեղ անուշահոտ թաշկինակ: Լէզի Գանուէն սկսեց աղաւտել թշուառ կայանաւորի ձեռքերը եւ յանկարծ աղաղակեց:

—Սրանք իսկ եւ իսկ այն շղթաներն են, որ երեկ վերատեսուէլ Գողիման մեզ հոյց տուեց. նրանցից մէկի վրա ես շատ լաւ նկատել եմ ահա այս փոքրիկ պատուածքը:

—Հենց նա է, նա է, բացեց վերջապէս դռնապահ մարկը բերանը: Ձեր հրաւիրած վե- րանուսուցն ինքը արեց այս ամենը՝ նա ինչ հարցրեց քաղցրութեամբ—կարող եմ ես հազնել ձեռքի շղթաները, եւ երբ ես բացառական պատասխան տուեցի, նա ասաց, որ իսկոյն եւ

գամ (դուրս է գալիս) անկողնից» (եր. 6), ձեռք կը եւ թաւր կէ արժանի պատմիւն» (եր. 9) եւ այլն:

Հետաքրքիր է նոյնպէս, թէ ինչու է պ. Թատուեման «Որէնքի կողմ» անունը Աննա է դարձրել:

S. Թ.

Նոր ստացված հրատարակութիւններ. 1) Բնա- խարիկ բառարան. Արտաշատ—Գեղարքունի. Վենետիկ, 1901 թ. 2) Уставъ общества взаимопомощи таф- лисских приказчиковъ. Тифлисъ, 1901 г. 3) Arme- nia. Magyar-Ormeny havi szemle. Julius 1901.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վարդավառի տօնի նշանակաւոր «Մշակի» հե- տեւեալ համարը լոյս կը տեսնի ոչ թէ երեք- չարթի, այլ չորեքշաբթի, յուլիսի 11-ին:

Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան խորհուրդը ուղարկեց ընկերութեան նախա- զան իշխան Գոյիցիյին մի հեռագիր, որով խնդրում է նրան միջնորդել, որ Մեծ-Իշխան Միխայիլ Նիկոլաւիչ իր հովանաւորութեան տակ տնի կովկասեան յօրէկեանական ցուցա- հանդէսը:

Ի նկատ առնելով, որ Կ. Պոլսում ժամտախտ է երեւացել եւ որ այդ վարակիչ հիւանդու- թիւնը կարող է մուտք գործել նաեւ Թիֆ- լիսի նահանգը, Թիֆլիսի նահանգապետի պ. պաշտօնակատարը առաջարկեց Թիֆլիսի ու- տիկանապետին, զատառապետներին եւ քաղա- քադուիններին առանձին ուշադրութիւն դարձ- նել բնակութեան տեղերի սանիտարական-ա- ռողջապահական դրութեան վրա եւ անմիջա- պէս ձեռնամուխ լինել կատարելու այն բոլոր պատուէրները, որոնք տրված են այդ մասին 1899—1900 թ.ականներին:

Վերջին շաբաթվայ ընթացքում չորք ան- տանելի էր ոչ միայն Թիֆլիսում, այլ նաեւ նրա չրջակայ բարձրագիւր գիւղերում, որոնք ծառա- յում են իբրեւ ամառանոց քաղաքացի միջին դասի համար: Մեզ հաղորդում են, որ այդ գիւղերից մէկում, Փղաւնում, որ ընդհանրապէս շատ աւելի զով ունի, քան Թիֆլիսը, վեր- չին ժամանակ տեղական կալուածատէրերից մէկի մեղուանոցում, չորքի աղբեղութիւնից, փեթակների մէջ միգրանացիներ թափվում են եւ մեղրը դուրս է հոսում փեթակներից, չը նայելով կալուածատիրոջ ձեռք առած բոլոր միջոցներին: Թիֆլիսի չրջակայ գիւղերում, ինչ- պէս ասում են տեղական բնակիչները, վաղուց այսպիսի չոք եւ տօթ ամառ չեն տեսել:

Եթ կը սովորեցնէ ինչ այդ բանը՝ նա հրամա- յեց երկու ձեռք չուռ տալ դէպի յետ եւ պա- հել մէջքիս վրա՝ միասին: Ես հնազանդվեցի եւ կատարեցի հրամանը: Միթէ կը համարձակվէ ընդդիմանալ: Բօլեպապէս նա հազցրեց ձեռքե- րիս վրա ահա այդ շողջողուն շղթաները, յետոյ գետին գլորելով ինչ՝ կապեց նաեւ ոտներս ահա այս թոկով, որի մի ծայրը ամուր պնգա- ցրեց լուսամուտի երկաթէ կեռի վրա:

—Վաղիք չուտով իշխանի մօտ եւ պատմիր նրան բոլոր անցքը, հրամայեցին տիկինները այլալլաւով:

Վերջինս դուրս թուաւ գլխապատառ եւ մի վայրկեանից յետ վերադառնալով բացականչեց.

—Ահա գալիս է ոստիկանը:

Երկու տիկինները շտապեցին դէպի նախա- սենեակ եւ միմեանք ըզուեցին գիշերապա պա- հապանին. «Մեր տունը կողոպտել են»...

—Չարմանալի է, ասաց ոստիկանը հանդար- տութեամբ, եւ սկսեց պատմել:

—Այս գիշեր՝ ժամը երկուսի կէսին՝ եկաւ մի ջէնտլմէն եւ ազատորէն բացեց դուռը բանա- լիով: Դռան ետեւ նա բաւական երկար աշխա- տում էր եւ երբեւն մօտեցայ հետաքրքրված, թէ ինչ է յիշում: Նա այնտեղ այսպէս տարածմամբ, նա դարձաւ դէպի ինչ եւ ասաց ժպտալով. «Ո՛ր, ամեն ինչ կարգին է, պ. ոստիկան: Ես իշխան Պետրովիչին եմ եւ չուտով պիտի ամուսնանամ միւս Վիրգինէի նարայանիքի հետ»: Յետոյ նա ինչ ասաց.— Գնացէ՛ք, խնդրեմ, հակեցէ՛ք իմ կողմը, որ թողի եմ ահա այնտեղ պարտէզի կողքին, ստուերում: Մի գուցէ տանեն նրան.— Գնան քալ անցած՝ ես տեսայ իսկապէս մի նոր եւ գեղեցիկ մօտօր-կէք: Մօտաւորապէս կէս ժամից յետոյ ջէնտլմէնը եկաւ եւ կտորք քնց դէպի դուռը: Այն ժամանակ ես լաւ նկատեցի եւ տեսայ, որ իշխանը ձգարիտ որ նոյն պարոնն է, որ վեր- չերս յաճախ գալիս էր ձեզ մօտ, տիկին, եւ

Մեզ հաղորդում են, որ Կովկասեան մամուլի գործողների ժողովը որոշեց ցուցահանդէսի հա- մար հրատարակել մի համառօտ տեսութիւն կովկասեան պարբերական մամուլի մասին:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի բուսաբա- նական այգին այս տարի արել է բազմատեսակ փորձեր նոր բոյսեր աճեցնելու: Այդու կառա- վարիչ Բօլով տարին վերջնապուց յետոյ կը տայ մի ամբողջ հաշիւ այդ փորձերի մասին:

Գործարանական եւ լեռնահանքային գործերի գլխաւոր առեանը վերջերքս մի քանի կարեւոր որոշումներ է կայացրել բանուորական հարցի վերաբերմամբ: Այդպէս, գլխաւոր առեանը բա- ցատրեց, որ երբ արդիւնաբերական հիմնար- կութիւնների համար վարձվող բանուորները խախտում են իրանց պայմանագրութիւնը (որի մէջ նշանակված է այն ժամանակը, որից սկսած նա պէտք է ի կատար ածվի երկու կող- մից), նրանք չեն կարող ենթարկվել քրեական պատասխանատուութեան, այլ միայն քաղաքա- ցիական պահանջ կարող է արվել նրանց վե- րաբերմամբ գործարանի վարչութեան կողմից, պատժագրքի 51⁴ յօդուածը, որով բանուոր- ները ոչ աւելի քան մի ամիս ձերբակալու- թեան են ենթարկվում, եթէ մինչեւ պայմա- նաւած լրանալը կամայական կերպով հրաժար- վում են բանուոր կամ թէ (եթէ վարձվել են անորոշ ժամանակով) երկու շաբաթ առաջ իմաց չեն տալիս, որ հրաժարվում են,—այդ յօդ- ուածը վերաբերվում է միայն այն բանուորնե- րին, որոնք արդէն իրապէս մտել են գործա- րանի բանուորների թիւը:

Շամպայնի ԿԱՐՄԻՐ-ԱՂԻԻԻԲ գիւղից մեզ գրում են. «Յուլիսի 1-ին Շամպայնի պրիս- տավը եկաւ մեր գիւղը եւ հաշուեց ու առձա- նագրեց կարկուտի տուած վնասը: Մեր գիւղի վնասը հասնում է 21,000 ռուբլու, Բերդ գիւ- ղինը 44,000-ի եւ Նորաշենինը՝ 11,000-ի»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Berliner Neueste Nachrichten»-ին Դա- մասկոսից հաղորդում են, որ գրողները, ապստամբվելով թիւրքաց իշխանութեան դէմ, յարձակվել են Գաուրան-Լիւիտի թիւրք բեր- դապահ գործի վրա ու կոտորել են եւ, բացի այդ, կողոպտել են Ջէմէլ-Սօֆայի թիւրքական գիւղերը, որտեղից 8,000 զորւս առաւ եւ տարել հետները սարերը: Դամասկոսից ու- ղարկված թիւրքական զորքը ջարդ է կերել եւ Դամասկոսի վայրի չուսափովթ օգնութիւն է խնդրել Կ. Պոլսից:

ձեզ հետ միասին դուրս գնում: Կասկածելու առիթ չը կար, իրաւունք՝ աւելի քիչ...

—Յետոյ իշխանը ասաց ինչ, —չարուսակեց ոստիկանը,—օգնիր ինչ եւ իմ բարեկամիս ներքեւ բերել իմ ճանապարհի պայտուակը: Այդ ժամանակ դռան մօտ երեւաց եւ մի ուրիշ պարոն բարձրահասակ, անձոնի կերպարան- քով, եւ երկուսը միասին դուրս բերեցին մի մեծ զամբիւղ, որպիսին գործ են ածում տի- կինները ճանապարհորդութեան ժամանակ: Ես եւս բռնեցի մի ծայրից եւ ակամայ բացական- չեցի.—«Ո՛հ, ինչ ծանր է, տէրք...»

—Օ՛, պատասխանեց նա,—եւ օտ սիրալիրիկ եմ պատրաստում. այո, սիրալիրիկ, կրկնեց նա, իմ հարսնացու միւս Վիրգինէի համար...

Այս խօսքերից յետոյ երեւը դարձրեց նա դէպի ձեր ննջարանի պատուհանը, մի օղային համալիր զրկեց ձեր հասցէին: Դրանից յե- տոյ նրանք կտոք նստեցին եւ շտապով հեռա- ցան...

—Տիրուհի, բարձր ձայնով գոչեց աղափրքը՝ նրա մտնելով Ձեզ համար բերել են ահա մի նամակ:

Վիրգինէն վերցրեց նամակը եւ նայեց: Ծրա- րի վրա հասցէն գրված էր իշխանի ձեռով:

Սրտատրոփ բացեց ու կարգաց.

«Իմ սիրելի երիտասարդ միւս».

«Յոյս ունեմ, որ կը գնահատե՛ք իմ քաղա- քապարտութիւնը եւ իմ գեղացիներին ջնջու- լութիւնը, որոնք ստիպեցին ինչ կողոպտել ձեզ մեր ամուսնութիւնից առաջ եւ նչ յետոյ ինչպէս կարող էր անել—եւ կանէր անշուշտ— մի ուրիշ իմ անդ...»

Խորին յարգանքով՝ ձեր Ուիլի Վալտերս՝ նոյնը եւ իշխան Պօլ Պետրովիչին:

Տիկինները ուշաթափվեցին:

Սերմացան

—Թիւրքիան, ինչպէս Նիւ-Եորկի հեռագրում են «Berliner Tageblatt» լրագրին, նորերն 95,000 զոյլար վարձատրութիւն է վճարել այն ամերիկական տպարանին, որոնք յիշատակ են հայկական կոտորածների ժամանակի։

—«Frankfurter Zeitung» ուսումնական նաւատորմի այցելութիւնը դէպի բոլորական նաւահանգիստները համարում է Ռուսաստանի եւ Բոլորականի մերձեցման նշան, որ ոչ մի վտանգ չէ սպառնում ոչ միւս եւրոպական պետութիւններին եւ ոչ Թիւրքիային, թէ՛ պետիւ, — ասում է լրագրից, — վատ չէր լինի, եթէ այս վերջինը յիշէր զեռ Բերլինի կոտորածի ժամանակ իր սուսած խոտորակները բարեւորագոյններ մտնելու Թիւրքիայի քրիստոնէական նահանգներում։

ԻՍԼԱՆ ԼՈՒՐԵՐ

Մ Ա Ն Բ Ա Ն Կ Ա Բ

—Այս, եթէ եւ 200,000 ռուբլի տանէի Ռբան մարդիկ արտասանել են այդ նախադասութիւնը։

Եւ ականատես եմ եղել, երբ արտասանել են նոյնը անպիսի անձինք, որոնք խաղաղական տոմսակ դեռ չեն գնել եւ յոյս էլ չունեն ձեռք բերելու։

Բայց ինչու նրանք էլ չը տնչան, չըզման ու չըբազան։ Խոստովանում են իրենց շատերը, որոնք տարիներ չարուհի սպասում են, չեն տանում 200,000 ռուբլին։

Իմ ականները, դուցէ ընթերցող եւ ձեռնակները, սովորել են 200,000-ի մասին յայտնած գանազան տեսակ տնչանքներին։

Սակայն ինձ շատ դուրսեցրեց, երբ լսեցի նոյնը մի արագանից։

—Այս, եթէ տանէի 200,000, բացականչեց նա կատաղի ոգեւորութեամբ։

Մենք նստած էինք այգում եւ ճաշում էինք։ Տանտերը հիւրասիրեց մեզ պատուական հին գինով եւ հրամայեց ծառայել բերել մի չիլի էլ սպանական գինի։ Սեղանակիցները շատ հաւանքեցին գինիները։ Տանտերը հրամայեց բերել դարձեալ մի քանի չիլի։ Այդ ժամանակ արագանի բերանից բուռն ոյժով դուրս թռաւ այդ նախադասութիւնը։

Մի վայրկեան մենք դադարեցրինք մեր ուրախ ըրբիւր եւ նայեցինք հողերը հոր վրա։ Նա ձեռքը խփեց սեղանին եւ բացականչեց։

—Շատ անգամ է այդ բանը մտքիս եկել, բայց բազմա քիչ բերում։

Ինձ հետաքրքրեց այն հարցը, թէ ինչ տնչանքներ պէտք է ունենար արագանը Նա երեւում էր անպէս համեստ, հասարակ, առանց յաւակնութիւնների մի մարդ։

—Ինչ պէտք է անէք արագան 200,000 ռուբլին, եթէ տանէի, հարցրի ես։

—Ինչպէս թէ ինչ պէտք է անեմ. դա էլ հարցնելու բան է, պատասխանեց նա շուտաւարձ։

—Ճիշդ որ, ինչ պէտք է անէք, բացականչեցին սեղանակիցները։

Սրբազանը վարաման մէջ ընկաւ։

—Հէջ այն, որ հարուստ կը լինեմ, — դա քիչ բան է, պատասխանեց նա փող կասեմ է. ոյժս կը շատանայ։

—Սակայն մի նպատակ պէտք է ունենաք թէ ոչ, հարցաւորեցինք մենք։

—Երբ որ հարուստ կը լինեմ, պատասխանեց նա, ինչ որ փափագ կունենամ բոլորն էլ կը կատարեմ։

—Օրինակ, ինչ փափագ։

—Օրինակ, ուսել խմելու կը լաւացնեմ, լաւ խոհարար կը վարձեմ։

—Այդ այժմ էլ կարող էք անել ձեր հաստիքներով։ Ուրիշ բան առանցէք։

—Սենականի պատերի կը ծածկեմ գեղեցիկ պատասխաններով, կամ կարասիներ ձեռք կը բերեմ։

—Դա էլ դատարկ բան է, պատասխանեցինք մենք։ Ուրիշ։

Սրբազանը փոքր ինչ կանգ առաւ։ Նրա ծրագիրը շատ էր փոքր։

—Իմ ընկեր եպիսկոպոսի նման բերել կը տամ օսմանլուի լաւ գնեականներ ու սրբիչներ, հոռուէտ սաղմոսներ, քարտեզներ ու քարտեզներ, կամ իմաց արագանը։

—Դրանք էլ համեմատաբար չնչին բաներ են։ Առանց 200,000-ի էլ կարող էք այդ բոլորը ձեռք բերել եւ ձեր երկրային երջանկութեան հասած լինել։ Ուրիշ բան առանցէք։

—Փողէ կը ցանկանայիք կաթողիկոս դառնալ։

—Չէ, չէ, եղբայր, չեմ ուզում այդպիսի բան, գլուխս ինչու ցաւի մէջ գցեմ։

Սրբազանը հրաժարուեմ էր այդ աստիճանից, բայց մի եւ նոյն սպանական նյութ էր մեր աչքերին, կարծես սպանում էր, որ մենք խնդրէինք համաձայնել կաթողիկոս դառնալու։

—Փողով հօ կաթողիկոս չէ կարելի դառնալ, նկատեց սեղանակիցներից մէկը, պէտք է ընտրել։

—Փողն էլ կարող է տեղը եկած ժամանակը օգնել, եթէ ցանկութիւն լինի, նկատեց արագանը. ես ցանկութիւն չունեմ։

—Այդ թողնեք, միջամտեց մի ուրիշ սեղանակից, վերադառնալով մեր զրոյցին։ Սրբազան, 200,000-ը կը բերի տարեկան մօտ 10,000 ռուբլի իսկ այն, ինչ որ դուք ցանկացաք, ըստ չնչին բաներ են։ Ուրիշ ինչ կանխէք այդպիսի խոսք գումարով։

—Է՛հ, ինչ գիտեմ. Հիմի չեմ մտաբերում, պատասխանեց շուտաւարձ։

պատասխանեց շուտաւարձ զեմքով արագանը։ Մեր սեղանակիցները զուարճանում էին այդ խոսակցութիւնից, բայց նրանցից մէկը յանկարծ լուրջ դէմք ընդունեց եւ սկսեց ցոյց տալ վրդովմունքի նշաններ։

—Ես ձեզ կօչնեմ, գիտեց նա արագանին։ Ես ցոյց կը տամ նպատակներ։

—Հա, հա, օրհնեալ լինես, ասա տեսնենք, վրա բերեց արագանը ուրախացած։

—Այդ խոսք գումարով կը բանալիք մի քանի գիւղերում գործողներ, կը հիմնէիք գրադարաններ, կը հրատարակէիք գրքեր, կը չինէիք ապաստարան գրկեալներին համար, կը պաշտէիք մի քանի թոշակաւոր ուսանողներ...։

—Է՛հ, որ գիտեցի, բաւական է, բաւական, աղօղակեց շուտաւարձ ձայնով արագանը։ Ինչու պէտք է ես այդ բոլորը անեմ. ի՞նչ պարտական եմ. ինձ ինչ օգուտ։ Այն ժամանակ էլ ինչ նշանակութիւն ունի 200,000 տանելը։ Ես 200,000-ը ինձ համար եմ ուզում եւ ոչ թէ ուրիշների համար։ Թող ուրիշները իրանք իրանց դարդը քաշեն։

Վրդովմունքը վարակեց եւ միւս սեղանակիցներին։

—Սրբազան, դուք արդար չէք, յայտնեցինք մենք։ Ձեզ հարց տուին, թէ ինչպէս պէտք է գումարը ծախսէք լուծութիւն տալու ձեր իղձերին. դուք չը կարողացաք մեծ ծրագիր ցոյց տալ։ Աւելորդ գումարները ինչ պէտք է անէք։

—Ձեզ ինչ, բարկացած պատասխանեց արագանը։ Ես իմ փողը տրեմ եմ. ինչ կուզեմ, այն էլ կանեմ։ Բաժանելու ցանկութիւն չունեմ։

—Իրօք չէք տարիւր։ Այդ բոլորը միայն ենթադրութիւն է, ձեր ձեռքում գումարը չը կայ։ Նա պէտք է ձեզ վրա իջնի իրեւ երկնքի մասնակց։ Միթէ գումարը ձեր ձեռքը ընկնելուց յետոյ մի մասը չէք հանի ուրիշների համար։

—Ինչու, ինչու պէտք է անեմ. ինչու ուրիշի հոգսը ես պէտք է քաշեմ։ Ես ինչ պարտական եմ. ես չեմ ուզում խաբել. այսօր խոստանալ, իսկ վաղը հրաժարուի։ Ես փաթիւնեցի չեմ։

—Բայց դուք լաւ օրինակ կը լինէիք, նախաձեռնող կը լինէիք, քաջախիորդի եւ խրատաւորի դեր կը կատարէիք։

—Ես մարդ չեմ, բացականչեց արագանը, ես միթէ սպրիւլ չեմ ուզում. ինչու հէջ ուրիշների վրա պէտք է մտածեմ ու նրանց ցաւերը լամ։

Վէճը սաստկացաւ, բայց ոչ մի հետեւանք չը հասցրեց։ Սրբազանը վրաւորեց այն պահանջները, որ անում էին սեղանակիցները, եւ այն ոճերից, որ նրանք զօրծ էին ամուսնի բանաց խոսակցութեան միջոցին։ Ուրախ ճաշը փչացաւ։

—Նա այդ տեսակի մարդ էր։ Սակայն կեանքի մէջ յաճախ մենք պատասխանում ենք ուրիշ արագաններին։

Նրանք ցոյց են տալիս իրանց մարդասէր, ազգասէր, պատաստ ամեն բան անելու հասարակութեան համար, եթէ միայն...

Եթէ 200,000 տանէի...

—Տուէք ինձ կարողութիւն եւ յետոյ տեսէք, թէ ինչ արդիւնք եմ ցոյց տալիս։ Գլխումս շատ լայն եւ ընդարձակ ծրագիրներ ունեմ, բայց ինչ արած։

Նրա քաղաքագործութիւն։

—Ինչու չէք սկսում փոքր գիրքով, հարցնում էք դուք։

—Չարժէ, պատասխանում է նա։

—Ինչու գլուխ չէք կանգնում գործի եւ գումարներ ժողովում, հարցնում էք դուք։

—Ոչինչ չի դուրս գալ, կը խոտանան ու ոչինչ չեն անի, պատասխանում է նա։

—Ինչու չէք չըլսապատում ձեզ եղած գործողներով եւ միացած ոյժերով գործ սկսում, հարցնում էք դուք։

—Ո՛վ կը գայ առանց փողի ամիսներով աշխատելու, պատասխանում է նա։

—Ուրեմն անգործութիւն, բացականչում էք դուք։

—Ինչ արած, ժամանակը այդպէս է։ Պէտք է սպասել, դուցէ ուրիշներ էլ կը գան, աշխատողներ էլ կը գտնվեն։

—Բարեբաղդաբար, ոսկին չէ ամեն բանի կարողադրող։

Նախաձեռնող, քաջախիորդ, խրատաւոր լինելու համար անհրաժեշտ չէ անպատճառ հարուստ լինել։

Անհրաժեշտ է ուրիշ բան։

Անկեղծ սէր դէպի հասարակական գործը եւ անձնուէր վերաբերմունք։

Ապագային որքան կամենաք։

Բայց այսօր մենք հոգեւորականների աշխարհը ընկանք, ուսում կանգ առնենք համապատասխան օրինակի վրա։

Չը գիտեմ, դուք, ընթերցող, ուշք էք դարձրել մի հանգամանքի վրա։ Այս տարի, ինչպէս ձեզ յայտնեմ, «Մշակ» լրագրի նուէրներ է ժողովում անբերրութիւնից վնասովանների օգտին։

Նայելով նուէրներ ժողովողների ցուցակին, իմ ուշադրութիւնը գրաւեց մի հանգամանք։ Այն, որ այդ ցուցակի մէջ շատ կային քահանաներ մի որոշ չըլնայից։

Դա ինձ հետաքրքրեց։

Ոչ այն պատճառով, որ ես համարում լինէի

քահանաներին անբերրունակ այդպիսի գործերի համար, այլ որովհետեւ իրապէս նրանք շատ քիչ են գործում այդ ուղղութեամբ։

Այդ ցուցակի մէջ գտնում ենք հետեւեալ քահանաներին՝

Մայի Կ. Կ. Ա. Ասկարեանին։

Եկատերինօղարի Ա. Վարդանեանին։

Աստարեանի Ս. Աղաբալանին։

Գէորգիեւիկի Ն. Վարդանեանին։

Գրոգիի Պ. Մարտիկեանին։

Ս. Պալի Գ. Աղաբալանին։

Կրասնօբոլսկի Ա. Վարդանեանին։

Սամարկանդի Ռ. Բեկգիւլեանին։

Արցեօք ձեզ չէ գարմացնում, ընթերցող, որ այդ քահանաները բոլորն էլ միայն մի թեմից են։ Աստարեանի թեմից։ Նայեցէք քաղաքների ցուցակին։ Դրանք Հիւսիսային կողմնաւան են եւ Անդրկասպեան երկրում։

Ինչու չը կան ցուցակի մէջ քահանաներ նաեւ Թիֆլիսի, Երեւանի, Շուշու, Շամախու թեմերից։

Որովհետեւ այնտեղի հոգեւոր իշխանութիւնները չը ցանկացան օրինակ կամ նախաձեռնող հանդիսանալ այս գործում։

Այստեղ, ինչպէս տեսնում էք, գործի համար հարստութիւն ու ոսկու պարկեր չեն հարկաւոր, այլ ցուակցութեան զգացմունք եւ օրինակ։

Մենք ամենեւին մտադիր չենք չափազանցել եւ խոցողացնել իրողութիւնը։

Բայց արձանագրել նրանք—ամենեւին աւելորդ չէ։

Վրժին

«ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

6 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՐԳ. Օրէնագրութիւնների ժողովածուի մէջ հրատարակված են Ֆինլանդական Մեծ Իշխանութեան համար Բարձրագոյն հաստատված նոր զինուորագրական կանոնադրութիւնը եւ Բարձրագոյն հրովարտակ. «Ողորմութեամբ Աստուծոյ, Մենք, Նիկոլայ II կայսր եւ Ինքնաւար համայն Ռուսաստանի եւ այն, յայտնում ենք մեր բոլոր հաւատարիմ հպատակներին, Ֆինլանդական Մեծ Իշխանութեան զորութիւնը Ռուսաց կայսրութեան կազմի մէջ պարգծ է դնում նրա ազգաբնակչութեան վրա՝ մասնակցել Գահի եւ հայրենիքի պաշտպանութեան գործում։ Հպատակվելով, համահաւասար մեր բոլոր հաւատարիմ հպատակներին, այն օրէնագրութիւններին, որոնք ապահովում են ռուսաց զորքի միութիւնը, Մեր երջանկայիտակ Պապ Ալեքսանդր II կայսրը, այդ կարեւոր սկզբունքը գիտակցելով, 1878 թվ. դեկտեմբերի 6/12-ի օրէնքով հաստատեց Ֆինլանդիայում, պետութեան միւս մասերի նման, ընդհանուր եւ անձնական զինուորագրութիւն։ Այդ օրէնքի գործադրութիւնից տաս տարի անցնելուց յետոյ, փորձ հաւատեց նրա անյարմարութիւնները։ Այդ պատճառով եւ համաձայն Մեր ի Տէր հանգուցեալ Մորդի եւ Մեր առում սկզբունքներին, Ֆինլանդիայում զինուորագրութեան վերաբերեալ ներթափանց գոյութիւն ունեցող կանոնները ենթարկվեցին զննութեան այն նպատակով, որ նրանք համաձայնեցվէին ընդհանուր կայսրութեան մէջ գոյութիւն ունեցող կանոնների հետ։ Այդ աշխատանքը վերջանալուց յետոյ, հաստատվով Ֆինլանդական Մեծ Իշխանութեան համար զինուորագրական նոր կանոնադրութիւնը, Մենք բարի դատեցինք թիֆլեացիներին փոխարինելու համար փոխանցումը զինուորական ծառայութեան նոր կարգերին։ Ուստի որոշեցինք, մինչեւ Մեր նոր ցուցմունքը, նորակոչներին զբաղ միմիայն այն զինուորական մասերի ցուցմունք, որոնք բաղկացած են զլխաւոր քապէս ֆինլանդացի բնիկներից, եւ, բացի այդ, կրճատել ամեն տարի իրական ծառայութեան համար կոչվողների թիւը։ Թող այս, վերջին, անօրէնութիւնը, որով վերացվում են մի քանի ֆինլանդական զինուորական մասեր, ընդունվի իբր վկայութիւն Մեր զինուորութեան՝ առաջնական շահեցնել ֆինլանդացիների անձնական պարտականութիւնները զինուորական ծառայութեան նկատմամբ։ Հաւատաւար լինելով, որ այս նորահաստատ կարգը կապահովի, ժամանակակից պայմանների համաձայն, Ֆինլանդիայի պետական ազգաբնակչութեան կողմից ընդհանուր պետական պարտականութիւնների կատարումը, մենք հրամայում ենք։

1) Ֆինլանդական Մեծ Իշխանութեան զինուորագրութեան վերաբերեալ մեր այսօրվայ հաստատած կանոնադրութիւնը մտցնել ի գործադրութիւն, փոխարինելով նրանով 1878 թվ. դեկտեմբեր 6/12-ի զինուորագրական կանոնադրութիւնը՝ իր բոլոր լրացումներով ու փոփոխութիւններով, ինչպէս նաեւ նոյն օրը տրված

հրովարտակը։ 2) Առաջին զինուորակոչը նոր կանոնադրութեան ճշտապահ գործադրութեամբ կատարել 1903 թվին։ 3) Մինչեւ Մեր նոր հրամանը։

ա) այս կանոնադրութեան հիման վրա ծառայութիւն մտնող նորակոչներին ընդունել ֆինլանդական գլխաւորական արագաձիգ բատալիօնը եւ զորագունան գունդը, եւ

б) ամեն տարի կոչվողների թիւը, սկսելով ներկայ տարուց, համակերպել այդ բատալիօնների եւ գնդի լրացման պահանջին։

4) Որոշ ժամանակամիջոցում, ըստ Մեր ցուցման, մտցնել Ֆինլանդական Մեծ Իշխանութեան մէջ հետեւեալ կանոնները։

а) Չօրէքների այն մասերի գերագոյն տեսչութիւնը, որոնք բաղկացած են զլխաւորապէս Ֆինլանդական զինուորական բնիկներից, պատկանում է զինուորական միւսիստին։

б) а յօդուածում նշանակված զօրքերի գլխաւոր հրամանատարութիւնը, նրանց ֆինլանդական զինուորական չըլնումով գտնված ժամանակը, յանձնվում է այդ չըլնայի զօրքերի հրամանատարին, որ կառավարում է նրանց իրան ստորադրեալ զինուորական-չըլնայի վարչութիւնների միջոցով։

в) Գլխաւորապէս ֆինլանդացի բնիկներից բաղկացած զօրամասերի օրոշումը, կազմակերպումը եւ պահպանումը կախված է Մեր հայեցողութիւնից, իսկ ծախսը այդ բաների համար անվում է ֆինլանդական զանձարանից։

д) Գլխաւորապէս ֆինլանդական բնիկներից բաղկացած զօրամասերը, թէ խաղաղութեան եւ թէ պատերազմի ժամանակ, կարող են, ըստ Մեր հայեցողութեան, գործ զրկել թէ Ռուսաստանում եւ թէ արտասահմանում։

е) Ռուսերէն ազատ խօսելը եւ ազատ գրել-կարգալը անհրաժեշտ պայման են համարվել օֆիցերական եւ ուսուցիչ-օֆիցերական աստիճանի ստանալու համար։

ф) Վերօրգանս նախանգի Բայթլայ գիւղի Ֆինլանդիայի բնիկ ազգաբնակչութեան չը պատկանող բնակիչները ենթարկվում են կայսրութեան ընդհանուր զինուորագրական կանոնադրութեան, բայց նրանց իրաւունք է տրվում զինուորական ծառայութիւնը կատարել Ֆինլանդական Մեծ Իշխանութեան համար տրված զինուորագրական կանոնադրութեան համաձայն։

г) Սկսել աստիճանաբար, ըստ Մեր առանձին ցուցմունքների, կազմակերպել ֆինլանդական արագաձիգ բատալիօններ։

6) Մինչեւ չըլնայի զինուորագրական տեսանների կազմակերպվելը նրանց բոլոր պարտաւորութիւնները ըստ նոր կանոնադրութեան կատարելու են զինուորական աստիճանները։

7) Թող տալ այն բոլոր անձանց, որոնք այս նոր կանոնադրութեան հրատարակման միջոցին կը գտնվեն զօրքերի շարքում, պահեստում կամ աշխարհագործի թիւում, կատարել զինուորական ծառայութիւնը 1878 թվ. դեկտեմբերի 6/12-ի կանոնադրութեան համաձայն, այն պայմանով, որ պահեստի զօրքին պատկանողներից նրանք, որոնք չեն եղել զօրքերի շարքում, համապատասխան ժամանակամիջոցով զրկվեն առաջին կարգի աշխարհագործի շարքերում։

8) Սկսել 28-ին, հազար իննհարիւր մէկ թվին, Մեր թաւաւորութեան եօթերորդ տարում։

9) Մինչեւ չըլնայի զինուորական տեսանների կազմակերպվելը նրանց բոլոր պարտաւորութիւնները ըստ նոր կանոնադրութեան կատարելու են զինուորական աստիճանները։

10) Թող տալ այն բոլոր անձանց, որոնք այս նոր կանոնադրութեան հրատարակման միջոցին կը գտնվեն զօրքերի շարքում, պահեստում կամ աշխարհագործի թիւում, կատարել զինուորական ծառայութիւնը 1878 թվ. դեկտեմբերի 6/12-ի կանոնադրութեան համաձայն, այն պայմանով, որ պահեստի զօրքին պատկանողներից նրանք, որոնք չեն եղել զօրքերի շարքում, համապատասխան ժամանակամիջոցով զրկվեն առաջին կարգի աշխարհագործի շարքերում։

11) Սկսել 28-ին,

Электротечатня Грузинск. Т-ва, Большая-Ванская ул., № 72.